Մամուլի Հաղորդագրություն

Նոր ԵՄ Թվինինգ Ծրագիրը
հարմոնիզացնելու է Հայաստանի վիճակագրությունը ԵՄ չափանիշներին

2011 թվականի Մարտի 16 ին, Հայաստանում կմեկնարկի ԵՄ Թվինինգ Ծրագիրը, որի նպատակն է նպաստել Հայաստանի վիճակագրության արդիականացմանը:
<<Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճագրական Ծառայությանը>> Թվինինգ Ծրագրի պաշտոնական մեկնարկը կազդարարեն՝ պրն. Յան Պլովզինգը, Դանիայի Վիճագրական Ծառայության նախագահը; Ստեփան Մնացականյանը, ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայության նախագահը, Պրն. Ռաուլ դե Լյուցենբերգերը, Հայաստանում Եվրամիության Պատվիրակության ղեկավարը, և Պրն. Մայքլ Բորգ- Հանսենը, Դանիայի դեսպանը Ուկրաինայում, Վրաստանում և Հայաստանում:

Եվրոպական Միության կողմից € 1,000,000 բյուջեի սահմաններում ֆինանսավորվող այս ծրագրի **նպատակն է** աջակցել Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայությանը ինստիտուցիոնալ թվինինգի միջոցով՝ արդիականացնելու Հայաստանի պաշտոնական վիճակագրության համակարգի հատուկ տարրերը: Սույն ծրագրի նպատակը իրագործելու համար կներդրվի համապարփակ կառավարման շրջանակ և Եվրոպական Միության չափանիշներին մոտարկված մեթոդաբանություններ:

Այս առումով, ծրագիրը հնարավորություն կընձեռի Հայաստանին՝ պատրաստել ԵՄ մեթոդաբանության չափանիշներին համապատասխան վիճակագրություն, որն ուղղակիորեն համադրելի կլինի Եվրոպական Միության երկրների, ինչպես նաև այլ երկրների վիճակագրությունների հետ: Կատարելագործված վիճակագրությունը տեղեկատվության կարևոր աղբյուր կհանդիսանա ինչպես Հայաստանի հասարակության, այնպես էլ Հայաստանում քաղաքականություն կերտողների համար:

Ծրագիրը կշարունակվի մինչև 2013 թվականի Հունվարի 30, և ծրագրի ակնկալվող **արդյունքները** կլինեն՝

- ՀՀ ԱՎԾ բոլոր հիմնական տվյալների հավաքագրումների համար մեթատվյալները և որակյալ ցուցանիշները կհավաքագրվեն, կհամակարգվեն և կհրապարակվեն ՀՀ ԱՎԾ կայք էջում;
- Վիճակագրական բիզնես ռեգիստրը կվերակազմակերպվի, կառուցվածքային բիզնես հետազոտության վիճակագրական հաշվետվական ձևերը կվերափոխվեն և հաշվետվությունների ծանրաբեռնվածությունը կնվազեցվի;
- Հայաստանի Ազգային հաշիվների ընդգրկումը կբարելավվի;
- Գյուղատնտեսական համատարած հաշվառումը կպլանավորվի և կներկայացվի;
- Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսը Հայաստանի համար կմշակվի;
- Ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման հետազոտություն կիրականացվի և արդյունքները կհրապարակվեն:

Օրը և ժամը: **16 Մարտի, 2011 ժամը 14:30**
Վայրը: **Կոնգրես Հյուրանոց, «Բոլրում» Սրահ, Իտալիայի 1 փողոց, Երևան**

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝
Թոմաս Բի, Թվինինգի մշտական խորհրդատու, Դանիայի Վիճակագրական Ծառայություն
tbi@dst.dk, tel. +374-95-595 394
Անահիտ Սաֆյան, Միջազգային Վիճակագրական Համագործակցության բաժնի պետ, ՀՀ ԱՎԾ
info@armstat.am, tel. +374-10-524 460